ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 002 խորհուրդը 13.07.2021թ.-ին կազմակերպեց Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ավագ դասախոս, Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ **Ռոզա Յուրիի Ավագյանի** ատենախոսության հրապարակային պաշտպանությունը՝ *«Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում»* թեմայով (գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Հայկ Ղազարյան): Ատենախոսությունը հրապարակային պաշտպանության էր ներկայացվել Ը 00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Պաշտոնական ընդդիմախոսներն էին՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Վահանյանը և տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Տոնիկ Քորարյանը:

Մասնագիտական խորհրդի անդամների փակ գաղտնի քվեարկության արդյունքներով Ռոզա Ավագյանին միաձայն շնորհվեց տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Սահմանված ընթացակարգով ատենախոսական գործը ներկայացվել է ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը:

Տնտեսագիտության դոկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գրիգոր Վահանյանը Ռոզա Ավագյանի ատենախոսության պաշտպանությունը համարում է իրադարձություն: Արցախի գիտակրթական դաշտում 44-օրյա պատերազմից հետո այն առաջինն էր, ինչը չափազանց խորհրդանշական է և նշանակում է, որ մեր ժողովրդի կամքը կոտրել հնարավոր չէ: Ինչքան էլ արյունարբու թուրքը փորձի մեզ ընկճել, արարող հայը կշարունակի արարել:

«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը՝ ի դեմս գլխավոր խմբագիր Ավետիք Հարությունյանի, ջերմորեն շնորհավարում է Ռոզա Ավագյանին, մաղթում վերանորոգ հավատով գիտական նորանոր ձեռքբերումներ արձանագրելու ուժ ու եռանդ, ինչի համար պարբերականը սիրով պատրաստ է տրամադրել ասպարեզ: